

040.1795.251204

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"25" դեկտեմբերի 2004 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2004 թվականի N 1795-Ն

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱԱԿՏԻՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐ  
ՊԱՐՈՒՆԱԿՈՂ

ԼՎԱՑՈՂ ՈՒ ՄԱՔՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

"Ստանդարտացման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով մակերեւութաակտիվ միջոցների եւ մակերեւութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների բազմազանությունը, շուկայում դրանց ծավալները եւ օգտագործման ժամանակ մարդու կյանքին եւ առողջությանը, շրջակա միջավայրին, այդ թվում՝ կենդանական եւ բուսական աշխարհին վնաս պատճառելու ռիսկի աստիճանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել մակերեւութաակտիվ միջոցների եւ մակերեւութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշման պաշտոնական հրապարակման պահից՝

ա) 2 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատել մակերեւութաակտիվ միջոցների եւ մակերեւութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների արտադրության եւ իրացման սանիտարական կանոններն ու նորմերը.

բ) 3 ամսվա ընթացքում մշակել հիգիենիկ եզրակացության տրամադրման կարգը եւ ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ հաստատման.

գ) մեկ տարվա ընթացքում մակերեւութաակտիվ միջոցների եւ մակերեւութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցներ արտադրող այն պետությունների առողջապահական մարմինների հետ, որոնց արտադրանքը ներմուծվում է Հայաստանի Հանրապետություն, կնքել հիգիենիկ եզրակացությունների փոխձանաչման պայմանագրեր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու տարի հետո:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ  
2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ

Հավելված  
ՀՀ կառավարության  
2004 թվականի դեկտեմբերի 16-ի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱԱԿՏԻՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐ  
ՊԱՐՈՒՆԱԿՈՂ  
ԼՎԱՑՈՂ ՈՒ ՄԱՔՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն մակերեւութաակտիվ միջոցների եւ մակերեւութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերին համապատասխան՝ հետեւյալ միջոցների վրա՝

մակերեւութաակտիվ միջոցներ 3402 20 200, 3402 90 100,

լվացող ու մաքրող միջոցներ, որոնք  
պարունակում են մակերեւութաակտիվ նյութեր 3402 20 900, 3402 90 900:

2. Սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին կետում նշված մակերեւութաակտիվ միջոցների եւ մակերեւութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցները (այսուհետ՝ լվացող միջոցներ) նախատեսված են գործվածքների եւ ամանեղենի բոլոր տեսակների, ինչպես նաեւ սալիկների, հատակի, խոհանոցային ու սանհանգույցի պարագաների, արդյունաբերական ու բժշկական սարքավորումների լվացման ու մաքրման համար:

3. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են 1-ին կետում նշված լվացող միջոցների անվտանգությունը բնութագրող, ինչպես նաեւ մակնշմանն ու փաթեթավորմանը ներկայացվող պահանջները եւ համապատասխանության հավաստման ընթացակարգերը:

4. Լվացող միջոցները ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման:

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետեւյալ հասկացությունները՝

լվացող միջոց՝ արտադրանք, որի բաղադրությունը հատուկ ընտրված է լվացող ազդեցության միջոցով աղտոտվածությունների հեռացման համար: Լվացող միջոցները ներառում են հիմնական (մակերեւութաակտիվ նյութեր կամ օձառ) եւ լրացուցիչ (ակտիվ հավելանյութեր) բաղադրիչներ:

Լվացող միջոցները կարող են ունենալ ցանկացած տեսք (հեղուկ, փոշի, մածուկ, կտոր, բրիկետ, թափծու կտոր, ձեւավոր կտոր եւ այլն):

մաքրող միջոց՝ փոքր քանակությամբ օձառ կամ ուրիշ մակերեւութաակտիվ նյութ պարունակող արտադրանք, որն օգտագործվում է հատակների, սալիկների, պատուհանների եւ այլ մակերեսների մաքրման համար:

մակերեւութաակտիվ միջոց՝ մակերեւութաակտիվ նյութերի (անիոնային, կատիոնային, ոչ իոնաձին, ամֆոլիտիկ) խառնուրդները, օրգանական լուծիչում դրանց լուծույթները կամ դիսպերսիաները, մակերեւութաակտիվ նյութի հիման վրա օձառ պարունակող կամ չպարունակող այլ խառնուրդները, ինչպես նաեւ օրգանական լուծիչում օձառի լուծույթները:

մակերեւութաակտիվ նյութ՝ մակերեւութային ակտիվությամբ օժտված քիմիական միացություն, որը հեղուկում (մասնավորապես, ջրում) լուծելիս հեղուկ-գոլորշի կամ միջֆազային այլ մակերեւութների վրա նախընտրելի մակակլանման շնորհիվ իջեցնում է դրա մակերեւութային կամ միջֆազային լարվածությունը.

մակերեւութային ակտիվություն՝ լուծույթում մակերեւութաակտիվ նյութի գործողություն, որը սովորաբար հանգեցնում է մակերեւութային եւ միջֆազային լարվածության իջեցման.

անիոնային մակերեւութաակտիվ նյութ՝ մակերեւութաակտիվ նյութ, որը ջրային լուծույթում իոնացվում է մակերեւութային ակտիվությունը պայմանավորող բացասական լիցքավորված իոնների.

կատիոնային մակերեւութաակտիվ նյութ՝ մակերեւութաակտիվ նյութ, որը ջրային լուծույթում իոնացվում է մակերեւութային ակտիվությունը պայմանավորող դրական լիցքավորված իոնների.

ոչ իոնաձին մակերեւութաակտիվ նյութ՝ մակերեւութաակտիվ նյութ, որը ջրային լուծույթում իոններ չի առաջացնում, եւ որի լուծելիությունը ջրում պայմանավորված է մոլեկուլում ջրի նկատմամբ խիստ խնամակցություն ունեցող գործառութային խմբերի առկայությամբ.

ամֆոլիտ մակերեւութաակտիվ նյութ՝ մակերեւութաակտիվ նյութ մի քանի գործառութային խմբերով, որը ջրային միջավայրում, կախված պայմաններից, իոնացվում է առաջացնելով բացասական լիցքավորված կամ դրական լիցքավորված իոններ.

մակերեւութային լարվածություն՝ լարվածություն հեղուկի մակերեւութային շերտում, որն արտահայտվում է երկարության միավորին ընկնող ուժով: Մակերեւութային լարվածությունը մակերեւութի եւ այդ մակերեւութի տակ գտնվող մոլեկուլների միջեւ փոխադարձ ձգողականությունն է, որն ուղղված է դեպի հեղուկի ներքին ծավալը:

Մակերեւութային լարվածությունը չափվում է միլինյուտոնով մետրում (մՆ/մ):

Մակերեւութային լարվածությունը հեղուկ եւ գոլորշի ֆազերի բաժանման մակերեւութին առաջացող ուժերի մասնավոր դեպք է.

միջֆազային լարվածություն՝ լարվածություն երկու հեղուկի բաժանման մակերեւութին, որն արտահայտվում է երկարության միավորին ընկնող ուժով:

Միջֆազային լարվածությունը չափվում է միլինյուտոնով մետրում (մՆ/մ).

առաջնային կենսատարրալուծում մանրէների ազդեցությամբ մակերեւութաակտիվ նյութի քայքայումը (սովորաբար ջրային միջավայրում), որի հետեւանքով այն կորցնում է իր մակերեւութային ակտիվությունը.

լրիվ կենսատարրալուծում՝ մակերեւութաակտիվ նյութի կենսատարրալուծման աստիճան, երբ ջրային միջավայրում օդի ներկայությամբ մանրէների ազդեցությամբ այն ամբողջովին տարրալուծվում է ածխածնի երկօքսիդի, ջրի, առկա այլ տարրերի հանքային աղերի եւ մանրէների կենսագործունեության այլ միացությունների.

լվացող ազդեցություն՝ լվացման գործողություն իրականացնելու՝ լվացող միջոցի ունակություն.

լվացման գործողություն՝ ադսորբվածքների հեռացման գործընթաց հիմքից դրանք վերածելով լուծույթ կամ դիսպերս վիճակի.

հավելանյութ՝ ակտիվ (լվացող միջոցների համար) լվացող միջոցի օժանդակ բաղադրիչ, սովորաբար անօրգանական կառուցվածքով, որի բնութագրական հատկությունները, զուգակցելով հիմնական բաղադրիչների հատկություններին, ի հայտ են գալիս լվացման ժամանակ:

6. Հայաստանի Հանրապետության տարածքում լվացող միջոցների իրացումն առանց համապատասխանության հավաստման արգելվում է:

7. Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա եւ շրջանառության մեջ գտնվող լվացող միջոցները պետք է ուղեկցվեն համապատասխանության նշանի մակնշմամբ, համապատասխանության սերտիֆիկատով կամ գրանցված համապատասխանության հայտարարագրով:

8. "Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան լվացող միջոցներն արտադրման եւ իրացման փուլերում պետք է ունենան Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային ծառայության դրական եզրակացություն:

(8-րդ կետը փոփ. 15.02.07 թիվ 174-Ն որոշում)

#### IV. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(IV բաժինը փոփ. 15.02.07 թիվ 174-Ն որոշում)

Լվացող միջոցներին ներկայացվող հիգիենիկ պահանջները

9. Լվացող միջոցները պետք է անվնաս լինեն ինչպես արտադրության, այնպես էլ պահման, փոխադրման եւ օգտագործման ժամանակ՝ մարդու կյանքի եւ առողջության համար, չառաջացնեն տեղային մաշկազրոյիչ ազդեցություններ, ինչպես նաեւ չպետք է ունենան թունավոր, մաշկաներծծվող, ալերգիկ, մուտագեն, քաղցկեղածին ազդեցություններ օրգանիզմի վրա:

10. Լվացող միջոցները չպետք է ունենան օրգանիզմում կուտակվելու (կումուլյատիվ) հատկություններ:

11. Լվացող միջոցները պետք է հեշտ եւ արագ մաքրվեն (հեռացվեն) մարդու մաշկածածկույթից եւ լվացող-մաքրվող արտադրատեսակների վրայից:

12. Լվացող միջոցները պետք է լավ լուծվեն ջրում եւ չունենան սուր հոտ:

13. Լվացող միջոցները չպետք է ունենան մակակլանվելու հատկություն՝ մաշկը եւ լվացման-մաքրման ենթակա իրերը դրանցով մշակելու ժամանակ:

Լվացող միջոցներին ներկայացվող անվտանգության պահանջները

14. Լվացող միջոցների արտադրման համար օգտագործվող մակերեսութաակտիվ նյութերի առաջնային կենսատարրալուծման աստիճանը պետք է լինի 80 տոկոսից ոչ պակաս:

15. Լվացող միջոցների արտադրման համար օգտագործվող մակերեսութաակտիվ նյութերի լրիվ կենսատարրալուծման աստիճանը 28 օրվա ընթացքում պետք է հասնի առնվազն 60 տոկոսի (ըստ ածխածնի երկօքսիդի):

16. Լվացող միջոցներում կամ դրանց մեկ տոկոսանոց ջրային լուծույթում ջրածնի իոնների խտությունը (pH) պետք է լինի՝

3-ից պակաս՝ ձեռքերի մաշկի հետ չշփվող թթվային լվացող միջոցների համար,

3-ից մինչեւ 11,5՝ ձեռքերի մաշկի հետ շփվող լվացող միջոցների համար,

11,5-ից ավելի՝ ձեռքերի մաշկի հետ չշփվող հիմնային լվացող միջոցների համար:

16ա. Լվացող միջոցներում ֆոսֆոր պարունակող միացությունների զանգվածային մասը (վերահաշվարկված ըստ P2O5) պետք է լինի՝

17 տոկոսից ոչ ավելի՝ ֆոսֆատներ պարունակող լվացող միջոցներում (բացառությամբ ջուրը փափկացնող լվացող միջոցների),

30 տոկոսից ոչ ավելի՝ ջուրը փափկացնող լվացող միջոցներում:

16բ. Քլորակտիվ միացություններ պարունակող լվացող միջոցներում ակտիվ քլորի զանգվածային մասը պետք է լինի 8 տոկոսից կամ 200 գ/դմ<sup>3</sup>-ից ոչ ավելի:

16գ. Փոշենման լվացող միջոցներում փոշու զանգվածային մասը չպետք է լինի 3 տոկոսից ավելի:

Լվացվող միջոցների մակնշմանը ներկայացվող պահանջները

17. Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող լվացող միջոցների փաթեթվածքի կամ պիտակների վրա տեսանելի տեղում եւ ընթեռնելի ձևով պետք է նշված լինեն հետևյալ տեղեկությունները՝

ա) լվացող միջոցի անվանումը, պիտակիության ժամկետը, պահման պայմանները (անհրաժեշտության դեպքում), գտաքաշը,

բ) արտադրողի (մատակարարի) անվանումը, ապրանքային նշանը (առկայության դեպքում), գտնվելու վայրը,

գ) լվացող միջոցի բաղադրությունը, որը նշվում է հետևյալ բաղադրամասերի 0.2 տոկոսից ավելի պարունակության դեպքում՝

ֆոսֆատներ,

ֆոսֆոնատներ,

անիոնային մակերեւութակտիվ նյութեր,

կատիոնային մակերեւութակտիվ նյութեր,

ոչ իոնաձին մակերեւութակտիվ նյութեր,

ամֆոլիտ մակերեւութակտիվ նյութեր,

թթվածին պարունակող սպիտակեցնող բաղադրիչներ,

քլոր պարունակող սպիտակեցնող բաղադրիչներ,

ԷԴՏԱ (EDTA) (տրիլոն Բ),

նիտրիլեռքացախաթթու,

ֆենոլներ եւ հալոգենացված ֆենոլներ,

պարադիքլորբենզոլ,

արոմատիկ ածխաջրածիններ,

ալիֆատիկ ածխաջրածիններ,

հալոգենացված ածխաջրածիններ,

օձառ,

զեոլիտներ,

պոլիկարբոքսիլատներ:

Մակնշվածքում բաղադրամասերի տոկոսային պարունակությունը պետք է նշվի հետևյալ ձևով՝

5 տոկոսից պակաս (0,2-ից մինչև 5 տոկոս պարունակության դեպքում),

5-15 տոկոս,

15-30 տոկոս,

30 տոկոսից բարձր:

Ֆերմենտների, պահպանող (կոնսերվացնող) նյութերի, ինչպես նաև ախտահանող նյութերի պարունակությունը նշվում է անկախ դրանց քանակությունից.

դ) ցուցումներ՝ օգտագործման վերաբերյալ (լվացվող եւ մաքրվող օբյեկտը, լվացման եղանակը, ջրի եւ լվացող միջոցի քանակությունը եւ այլն).

ե) լվացքի համար նախատեսված լվացող միջոցի փաթեթվածքի վրա լրացուցիչ նշվում է նաև լվացքի մեքենայի ստանդարտ բեռնաչափերի համար լվացող միջոցի առաջարկվող քանակությունը (չափաբաժինը)՝ հաշվի առնելով ջրի կոշտությունը եւ լվացման ցիկլերը.

զ) լվացքի մեքենայի ստանդարտ բեռնաչափեր են համարվում՝ 4,5 կգ չոր գործվածքը ուժեղ լվացող միջոցի համար, եւ 2,5 կգ չոր գործվածքը՝ թույլ լվացող

միջոցի համար:

Պոտենցիալ ալերգենները նշվում են լվացող միջոցներում դրանց 0,01 տոկոսից ավելի պարունակության դեպքում:

Ջրածնի իոնների ակտիվությունը նշվում է 3-ից ցածր կամ 11,5-ից բարձր pH-ի արժեքի դեպքում՝ "Ձեռքերի մաշկի հետ շփման ենթակա չէ" մակագրությամբ կամ այդ պահանջը բնութագրող նշանի մակնշմամբ:

"Պարունակում է ակտիվ քլոր" մակագրությունը՝ քլոր պարունակող սպիտակեցնող բաղադրիչներով լվացող միջոցների համար:

Լվացող միջոցը համարվում է ուժեղ, եթե արտադրողը կամ մատակարարը փաթեթվածքի վրա չի նշել, որ այն հիմնականում նախատեսված է գործվածքների խնամքի համար, բայց այն կարող է օգտագործվել նաև նուրբ եւ գունավոր գործվածքների լվացման համար՝ ցածր ջերմաստիճանում:

(17-րդ կետը փոփ. 15.02.07 թիվ 174-Ն որոշում)

18. Արդյունաբերական նպատակով օգտագործվող լվացող միջոցների փաթեթվածքների վրա պարտադիր չէ նշել 17-րդ կետի "գ" եւ "դ" ենթակետերով սահմանված պահանջները, եթե այդ տեղեկությունները տրվում են ապրանքաուղեկից փաստաթղթերում:

19. Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետությունում իրացվող, Հայաստանի Հանրապետությունում արտադրվող եւ ներմուծվող լվացող միջոցների վերաբերյալ սույն տեխնիկական կանոնակարգի 17-րդ կետի "ա", "բ", "գ" եւ "դ" ենթակետերում սահմանված տեղեկատվության տրամադրումը սպառողին՝ հայերենով:

20. Լվացող միջոցի փաթեթավորումը եւ դրա համար օգտագործվող նյութերը պետք է ապահովեն արտադրանքի պահպանվածությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը դրա փոխադրման, պահման, իրացման եւ օգտագործման ժամանակ:

## V. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

21. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին լվացող միջոցների համապատասխանությունը հավաստելու համար արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր

ներկայացուցիչը պետք է ունենան Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի "Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները եւ դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին" N 1170-Ն որոշմամբ սահմանված 2 հ, 3 հ կամ 4 հ հայտարարագրման սխեմայով հավաստված համապատասխանության հայտարարագիր կամ

սերտիֆիկացման 2 ս, 3 ս, 4 ս, 5 ս կամ 6 ս սխեմայով հավաստված համապատասխանության սերտիֆիկատ:

Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը լվացող միջոցների փոխադրական տարաների վրա եւ (կամ) ապրանքաուղեկից փաստաթղթերում կարող են նշել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի "Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները

եւ կիրառման կարգը սահմանելու մասին" N 1284-Ն որոշմամբ սահմանված ձևի համապատասխանության նշանը:

22. Սերտիֆիկացման մարմինը փորձարկումներ կատարելու նպատակով արտադրողի, մատակարարի կամ նրա լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ լվացող միջոցի տվյալ խմբաքանակի յուրաքանչյուր փոխադրական տարայից ընտրում է մեկական փաթեթվածք (սպառողական տարա), բայց ոչ պակաս 9 հատից: Ընտրված փաթեթվածքների

պարունակությունը միացնում են, լավ խառնում եւ կրճատում են մինչեւ 1 կգ զանգվածով միջին նմուշի ստացումը:

Փոշենման լվացող միջոցների նմուշը կրճատում են քառորդացման մեթոդով: Ստացված միջին նմուշը տեղավորում են մաքուր, չոր, կիպահղկված խցանով բանկայում կամ այլ հերմետիկ փակվող տարողությունում:

Միջին նմուշով տարային փակցնում են պիտակ, որի վրա պետք է նշվեն՝  
լվացող միջոցի անվանումը, դրա նշանակումը,  
արտադրողի (մատակարարի) կամ դրա լիազոր ներկայացուցչի անվանումը,  
ապրանքային նշանը (առկայության դեպքում),

նորմատիվ փաստաթղթի նշագիրը,  
արտադրման թվաքանակը,  
խմբաքանակի համարը,  
նմուշառման թվաքանակը (տարեթիվը, ամիսը, ամսաթիվը),  
նմուշառման վայրը,  
նմուշառումն իրականացնողի ազգանունը եւ ստորագրությունը:

23. Լվացող միջոցների նույնականացման գործընթացում ստուգվում են փաթեթավորման տարաների կամ դրանց փակցված պիտակների վրա կատարված մականշվածքի

համապատասխանությունն ապրանքաուղեկից փաստաթղթում տրված տեղեկատվությանը:

24. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան փորձարկումները պետք է կատարի սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնով սահմանված փորձարկման մեթոդների ստանդարտներին համապատասխան:

25. Սերտիֆիկացման մարմինը հայտատուին համապատասխանության սերտիֆիկատը հանձնելու ժամանակ նրա հետ կնքում է սերտիֆիկատի օգտագործման մասին պայմանագիր, եթե սերտիֆիկացումն իրականացվել է համապատասխանության հավաստման

2 ա, 3 ա, 4 ա կամ 5 ա սխեմայով:

26. Համապատասխանության հայտարարագրի կամ համապատասխանության սերտիֆիկատի

գործողության ժամկետի ընտրությունը պետք է կատարվի ըստ համապատասխանության հավաստման իրականացված սխեմայի՝

2 հ կամ 2 ա սխեմայի դեպքում՝ 12 ամիս,

3 ա սխեմայի դեպքում՝ 24 ամիս,

3 հ, 4 ա կամ 5 ա սխեմայի դեպքում՝ 36 ամիս,

4 հ կամ 6 ա սխեմայի դեպքում՝ գործողության ժամկետը սահմանվում է հաշվի առնելով լվացող միջոցների պիտանիության ժամկետը, բայց ոչ պակաս 3 ամսվանից:

27. "Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սերտիֆիկացված լվացող միջոցների համապատասխանության հսկողությունն իրականացվում է համապատասխանության սերտիֆիկատի գործողության ընթացքում, առնվազն տարեկան մեկ անգամ՝ սույն տեխնիկական կանոնակարգի 25-րդ կետում նշված պայմանագրով սահմանված ժամկետներում:

28. Համապատասխանության հսկողության արդյունքների հիման վրա "Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սերտիֆիկացման մարմինն իրավունք ունի պահպանելու իր կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կամ այն կասեցնելու կամ դադարեցնելու: Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման եւ դադարեցման պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N 1170-Ն որոշմամբ:

Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում սերտիֆիկացման մարմինը դրա մասին տեղեկացնում է

համապատասխանության սերտիֆիկատը տնօրինողին եւ գրավոր ծանուցում ստուգումներ իրականացնող իրավասու մարմիններին:

VI. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

29. Լվացող միջոցների չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվի "Չափումների միասնականության ապահովման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

30. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին լվացող միջոցների համապատասխանության պետական վերահսկողությունը պետք է իրականացվի "Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VIII. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

.-----.	
Ստանդարտի նշագիրը	Պահանջներ եւ փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտի անվանումը
ԳՕՍՍ 22567.5	Միջոցներ լվացող սինթետիկ եւ մակերեւութաակտիվ նյութեր. Ջրածնական իոնների խտության որոշման մեթոդներ
ԳՕՍՍ 30024 (ԻՍՕ 607-80)	Նյութեր մակերեւութաակտիվ եւ միջոցներ լվացող սինթետիկ. Նմուշի բաժանման մեթոդներ
ԳՕՍՍ Ռ 50595	Նյութեր մակերեւութաակտիվ. Ջրային միջավայրում կենսաքայքայման որոշում
ԳՕՍՍ Ռ 50550	Ապրանքներ կենցաղային քիմիայի. Ջրածնական իոնների ակտիվության ցուցիչի (pH) որոշման մեթոդ
ԳՕՍՍ 22567.7	Սինթետիկ լվացող միջոցներ. Ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասի որոշման մեթոդ
ԳՕՍՍ 25644 (հավելված Բ՝	Սինթետիկ լվացող փոշենման միջոցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ փորձարկման մեթոդ)
ԳՕՍՍ Ռ 50551	Կենցաղային քիմիայի ապրանքներ. Ակտիվ քլորի որոշման մեթոդ
ԳՕՍՍ Ռ 51023	Կենցաղային քիմիայի ապրանքներ. Ֆոսֆոր պարունակող միացությունների որոշման մեթոդներ

(VIII բաժինը փոփ. 15.02.07 թիվ 174-Ն որոշում)

